Ք. Ս. Լիւիս

Պարզապէս քրիստոնէութիւն

Գիրք 1. Բարին եւ Չարը որպէս տիեզերքի իմաստի բանալի

1. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԸ

Իւրաքանչիւրը լսել է, թէ ինչպէս են մարդիկ վիճում: Երբեմն դա ծիծաղելի է հնչում, երբեմն էլ՝ ուղղակի տհաճ: Սակայն, ինչպէս էլ հնչի, կարծում եմ, որ մենք կարող ենք մեզ համար կարեւոր դասեր քաղել՝ լսելով, թէ ինչ են վիճաբանողներն ասում միմեանց: Նրանք այսպիսի բաներ են ասում. «Որքանո՞վ քեզ դուր կը գար, եթէ մէկ ուրիշը նոյն բանն անէր քո հանդէպ», «Դա իմ տեղն է, առաջինը ես եմ այն զբաղեցրել», «Հանգիստ թող նրան, նա քեզ ոչ մի վատ բան չի անում», «Ինչո՞ւ պէտք է ես զիջեմ քեզ», «Քո նարնջից մի կտոր տուր ինձ, ես քեզ տուել եմ իմից», «Դէ շուտ արա, դու խոստացել ես»: Մարդիկ ամէն օր ասում են նման բաներ՝ թէ՛ կրթուած մարդիկ եւ թէ՛ կրթութիւն չունեցողները, թէ՛ երեխաները եւ թէ՛ մեծերը:

Այս բոլոր արտայայտութիւնների հետ կապուած ինձ հետաքրքրում է միայն այն, որ նման բաներ ասող մարդը հէնց այնպէս չի յայտարարում, թէ իրեն դուր չի գալիս միւս մարդու վարքագիծը: Դրանով նա կոչ է անում վարքագծի մի նորմայի, որն, իր կարծիքով, դիմացինը նոյնպէս գիտի: Իսկ դիմացինը հազուադէպ է ասում. «Թքած ձեր նորմայի վրայ»: Գրեթէ միշտ նա ձգտում է ցոյց տալ, որ այն, ինչն ինքը արել է, իրականում չի հակասում վարքագծի նորմային, իսկ եթէ անգամ հակասում է, ապա դրա համար կան առանձնայատուկ արդարացուցիչ պատճառներ: Նա ձեւացնում է, թէ տուեալ դէպքում կան յատուկ հանգամանքներ, որոնց պատճառով առաջինը տեղ զբաղեցրած անձը չի կարող օգտուել դրանից, կամ նարնջի կտորն իրեն տուել են բոլորովին այլ պայմաններում, կամ որ տեղի է ունեցել մի ինչ-որ արտառոց բան, ինչն իրեն ազատում է խոստումը կատարելու պարտականութիւնից:

Փաստօրէն, այնպիսի տպաւորութիւն է ստեղծւում, թէ երկու կողմերն էլ նկատի ունեն ազնիւ խաղի, կամ օրինաւոր վարուելակերպի, կամ բարոյականութեան, կամ այդ կարգի որեւէ այլ բանի մասին ինչ-որ օրէնք կամ կանոն, որի շուրջ նրանք համակարծիք են: Եւ իրօք այդպէս է: Հակառակ դէպքում, նրանք կը կռուէին կենդանիների պէս՝ ի վիճակի չէին լինի վիճաբանել, այդ բառի մարդկային իմաստով: Վիճաբանել նշանակում է փորձել ցոյց տալ, որ միւս մարդը սխալ է: Եւ այդ փորձերն անիմաստ կը լինէին, եթէ ձեր եւ նրա միջեւ չլինէր ինչ-որ տեսակի համաձայնութիւն այն հարցում, թէ որն է ճիշտ եւ որը՝ սխալ: Նոյն կերպ, անիմաստ կը լինէր ասել, թէ ֆուտբոլիստը խախտում է թոյլ տուել, եթէ որոշակի համաձայնութիւն չլինէր ֆուտբոլային խաղի կանոնների վերաբերեալ:

Այս օրէնքը նախկինում ընդունուած էր անուանել «Բնութեան օրէնք»: Այսօր, երբ մենք խօսում ենք «բնութեան օրէնքների» մասին, մենք սովորաբար նկատի ունենք այնպիսի բաներ, ինչպիսիք են ձգողականութեան ուժը, ժառանգականութիւնը կամ քիմիայի օրէնքները: Սակայն երբ հին շրջանի մտածողներն էին բարու եւ չարի օրէնքներն անուանում «Բնութեան օրէնք», նրանք իրականում նկատի ունէին Մարդկային բնութեան օրէնքը: Նրանց գաղափարը կայանում էր նրանում, որ ինչպէս բոլոր ֆիզիկական մարմինները ենթարկւում են ձգողականութեան օրէնքին, եւ բոլոր օրգանիզմները կառավարւում են կենսաբանական օրէնքներով, այնպէս էլ մարդ կոչուող արարածն ունի իր օրէնքը՝ այն էական տարբերութեամբ, որ ֆիզիկական մարմինը չի կարող ընտրութիւն կատարել՝ ենթարկուե՞լ ձգողականութեան օրէնքին, թէ՞ ոչ, մինչդեռ մարդն ընտրութեան իրաւունք ունի՝ կա՛մ ենթարկուել Մարդկային բնութեան օրէնքին, կա՛մ՝ խախտել այն:

Նոյն գաղափարը կարող ենք արտայայտել ուրիշ ձեւով: Իւրաքանչիւր մարդ ամէն վայրկեան ենթակայ է մի շարք օրէնքների միաժամանակեայ ազդեցութեան, բայց դրանցից միայն մէկն է, որ մարդը կարող է խախտել: Իբրեւ ֆիզիկական մարմին, նա ենթակայ է ձգողականութեան օրէնքին եւ չի կարող դրան հակառակուել. եթէ մարդուն առանց յենարանի թողնէք օդում, ապա նա վայր ընկնելու կամ չընկնելու ընտրութեան աւելի մեծ հնարաւորութիւն չի ունենայ, քան սովորական քարը: Իբրեւ օրգանիզմ, նա ենթակայ է զանազան կենսաբանական օրէնքների, որոնք նա չի կարող խախտել, ճիշտ այնպէս ինչպէս դրանք ի վիճակի չեն խախտել կենդանիները: Այսինքն, մարդը չի կարող խախտել այն օրէնքները, որոնք ընդհանուր են իր եւ այլ մարմինների կամ օրգանիզմների համար: Սակայն կայ օրէնք, որը յատկանշական է միայն մարդկային բնութեանն եւ այն չի տարածւում կենդանիների, բոյսերի կամ անօրգանական առարկաների վրայ: Դա միակ օրէնքն է, որ մարդն ազատ է խախտելու սեփական հայեցողութեամբ:

Այդ օրէնքը կոչուել է «բնական» օրէնք, քանի որ ըստ նախկինում տիրապետող համոզմունքի, ամէն մարդ ի ծնէ տեղեակ է այդ օրէնքին եւ սովորեցնելու կարիք չկայ: Ի հարկէ, այդ համոզմունքի տէր մարդիկ նկատի չունէին, թէ ժամանակ առ ժամանակ չեն կարող լինել անհատներ, որոնք անտեղեակ են այդ օրէնքին, ինչպէս օրինակ լինում են գոյները չզանազանող մարդիկ, կամ երաժշտական լսողութիւնից զուրկ մարդիկ: Սակայն մարդկային ցեղն իր ամբողջութեան մէջ դիտարկելով, նրանք գտնում էին, որ օրինաւոր վարքագծի վերաբերեալ մարդկային պատկերացումն ակնյայտ է իւրաքանչիւրի համար: Եւ ես գտնում եմ, որ նրանք ճիշտ էին: Եթէ նրանք ճիշտ չլինէին, ապա այն ամէնը, ինչ մենք ասում ենք պատերազմների մասին, կ'իմաստազրկուէր: Ի՞նչ իմաստ կ'ունենար ասել, թէ թշնամին սխալ է, եթէ բարու հասկացութիւնը չլինէր իրականութիւն, որի մասին նացիստներն իրենց հոգու խորքում նոյնքան լաւ գիտէին, որքան մենք, եւ պարտաւոր էին ղեկավարուել դրանով: Եթէ նրանք պատկերացում չունենային այն բանի մասին, ինչը մենք համարում ենք բարի, ապա նրանց դէմ պայքարելով կարող էինք նրանց մեղադրել իրենց գործած չարիքի համար ոչ աւելին, քան իրենց մազերի գոյնի համար:

Ես գիտեմ, որ որոշ մարդկանց կարծիքով մեզ յայտնի Բնութեան օրէնքի կամ օրինաւոր վարքագծի գաղափարը ողջ մարդկութեան վրայ տարածելը զուրկ է բաւարար հիմքից, քանի որ տարբեր քաղաքակրթութիւններում եւ տարբեր դարաշրջաններում եղել են բարոյականութեան վերաբերեալ տարբեր պատկերացումներ:

Սակայն դա ճիշտ չէ: Բարոյականութեան մասին պատկերացումների տարբերութիւններ եղել են, բայց դրանք չեն վերածուել համընդհանուր տարբերութիւնների: Եթէ որեւէ մէկը նեղութիւն քաշի համեմատելու, ասենք, հին եգիպտացիների, բաբելոնացիների, հինդուսների, չինացիների, յոյների կամ հռոմէացիների բարոյախօսական ուսմունքները, ապա նա կը ցնցուի այն փաստից, թէ որքան մօտ են այդ ուսմունքները եւ բարոյականութեան վերաբերեալ մեր ներկայիս պատկերացումները: Այս ամէնի վերաբերեալ որոշ հիմնաւորումներ, ես ընդհանրացրել եմ իմ մէկ այլ՝ «Մարդու դադարումը» գրքի հաւելուածում, սակայն սոյն քննարկման շրջանակում ես ընթերցողին սոսկ կը խնդրէի մտածել այն մասին, թէ ինչի՞ կարող էր յանգեցնել բարոյականութեան լիովին տարբեր ըմբռնումը: Պատկերացրէք մի երկիր, որտեղ հիանում են պատերազմի դաշտից փախչող մարդկանցով, կամ որտեղ մարդը հպարտանում է իր նկատմամբ բարի գտնուած անձանց խաբելու համար: Նոյն յաջողութեամբ, կարելի է պատկերացնել մի երկիր, ուր երկու անգամ երկուսը հաւասարուի հինգի: Մարդիկ տարբերուել են այն հարցում, թէ ում նկատմամբ պէտք չէ լինել եսասէր՝ միայն սեփական ընտանիքի անդամների՞, հայրենակիցների՞, թէ՞ բոլորի հանդէպ: Սակայն նրանք բոլորն էլ համակարծիք են, որ պէտք չէ սեփական անձը դասել ամէնից վեր: Եսասիրութիւնը երբեւէ չի դիտուել իբրեւ դրուատելի երեւոյթ: Մարդիկ տարբեր կարծիքներ են ունեցել նաեւ այն հարցի շուրջ, թէ քանի կին կարելի է ունենալ՝ մէ՞կ, թէ՞ չորս: Սակայն նրանք համակարծիք են եղել, որ չի կարելի տիրանալ դուր եկած ցանկացած կնոջ:

Սակայն առաւել ուշագրաւ է հետեւեալը: Եթէ երբեւէ հանդիպէք մի մարդու, որը կ'ասի, թէ ինքը չի հաւատում բարու եւ չարի իրողութեանը, ապա յաջորդ պահին կը տեսնէք, թէ ինչպէս է այդ նոյն մարդը վերադառնում իր կողմից մերժուած սկզբունքներին: Նա կարող է խախտել ձեզ տուած խոստումը, սակայն եթէ դուք փորձէք խախտել իրեն տուած ձեր խոստումը, ապա չէք հասցնի մի խօսք էլ ասել, երբ նա կը բողոքի. «Դա արդար չէ»: Պետութեան ներկայացուցիչները կարող են պնդել, որ պայմանագրերը նշանակութիւն չունեն, սակայն յաջորդ պահին իրենք իրենց հերքելով կ'ասեն, որ այն պայմանագիրը, որն իրենք ցանկանում են խախտել՝ անարդար է: Մինչդեռ, եթէ պայմանագրերը նշանակութիւն չունեն եւ գոյութիւն չունեն բարին ու չարը, կամ այլ խօսքով՝ գոյութիւն չունի Բնութեան օրէնքը, ուրեմն ինչո՞ւմն է կայանում արդար եւ անարդար պայմանագրերի տարբերութիւնը: Կարծում եմ, մախաթը տոպրակում չես պարտակի, եւ ինչ էլ որ ասեն, պարզ երեւում է, որ նրանք նոյնքան լաւ գիտեն Բնութեան օրէնքը, որքան մէկ ուրիշը:

Ուստի ստացւում է, որ մենք հարկադրուած ենք ընդունել բարու եւ չարի իրական գոյութիւնը: Մարդիկ ժամանակ առ ժամանակ կարող են սխալուել այդ հասկացութիւնների ձեւակերպումներում, ինչպէս, օրինակ, երբեմն սխալւում են թուաբանական գործողութիւններ կատարելիս: Սակայն բարու եւ չարի մասին հասկացութիւնները կախուած են մարդկանց ճաշակից եւ կարծիքից ոչ աւելին, քան բազմապատկման աղիւսակը: Այժմ, եթէ դուք համամիտ էք ինձ հետ այս հարցում, ես կ'անցնեմ իմ յաջորդ հիմնադրոյթի ներկայացմանը, որը հետեւեալն է. մեզնից ոչ ոք իրականում չի պահպանում Բնութեան օրէնքը: Եթէ ձեր մէջ կան բացառութիւններ, ես ներողութիւն եմ խնդրում նրանցից: Նրանք աւելի լաւ կ'անեն մէկ ուրիշ գիրք կարդան, քանի որ իմ ասելիքը նրանց չի վերաբերում: Իսկ մենք վերադառնանք սովորական մարդկային էակներին:

Յուսով եմ, սխալ չէք հասկանայ այն, ինչ ուզում եմ ասել: Ես չեմ քարոզում, եւ Աստուած վկայ, չեմ ձեւացնում, թէ միւսներից լաւն եմ: Ես միայն փորձում եմ ուշադրութիւն հրաւիրել մի

փաստի վրայ: Դա այն է, որ այս տարի, կամ այս ամիս, կամ, որ աւելի հաւանական է, հէնց այսօր, մենք չենք կարողացել դրսեւորել այնպիսի վարքագիծ, որն ակնկալում ենք միւսներից: Դրա համար կարող են լինել զանազան պատճառաբանութիւններ: Օրինակ, դուք անարդար գտնուեցիք երեխաների հանդէպ, որովհետեւ շատ յոգնած էիք: Մասամբ մութ դրամական գործարքը, որի մասին գրեթէ մոռացել էիք, ստացուեց, երբ ձեր ֆինանսական գործերը շատ վատ էին: Այն, ինչ դուք խոստացել էիք ձեր հին ընկերոջը եւ այդպէս էլ չարեցիք, երբեք չէիք խոստանայ, եթէ իմանայիք, թէ որքան զբաղուած էք լինելու: Ինչ վերաբերում է ձեր կնոջ (կամ ամուսնու) կամ քրոջ (կամ եղբօր) հանդէպ վերաբերմունքին, ապա եթէ ես նախօրօք իմանայի, թէ նրանք ինչ աստիճանի կարող են զայրացնել մարդուն, ես չէի զարմանայ, եւ ի վերջոյ, ես ով եմ որ: Ես ինքս էլ այդպիսին եմ: Այսինքն, ես ինքս չեմ կարողանում պատշաճ կերպով պահպանել Բնութեան օրէնքը, սակայն այն պահին, երբ որեւէ մէկն ինձ ասում է այդ մասին, իմ գլխում ծագում են բազում արդարացումներ ու պատճառաբանութիւններ: Այդ պահին խնդիրն այն չէ, թէ որքանով են հիմնաւոր այդ արդարացումներն ու պատճառաբանութիւնները: Բանն այն է, որ դրանք մէկ անգամ եւս ապացուցում են, թէ մենք որքան խորապէս ենք հաւատում Բնութեան օրէնքին, անկախ այն բանից դա մեզ դուր է գալիս, թէ ոչ: Եթէ մենք չենք հաւատում Բնութեան օրէնքին, ապա ինչո՞ւ պէտք է մտահոգուենք մեր ոչ պատշաճ վարքագիծն արդարացնելու համար: Իրականութիւնն այն է, որ մենք այնքան ենք հաւատում առաքինութեանը եւ զգում Բնութեան օրէնքի բարոյական ճնշումը մեզ վրայ, որ չենք հանդուրժում այն փաստը, որ մենք ինքներս ենք խախտում այդ չափանիշները եւ, այդ իսկ պատճառով, ձգտում ենք թօթափել պատասխանատուութիւնը զանազան արդարացումներով ու պատճառաբանութիւններով: Նկատած կը լինէք, որ մենք բացատրութիւններ ենք որոնում միայն մեր վատ վարուեցողութեան համար: Մենք միայն մեր վատ արարքներն ենք պատճառաբանում նրանով, որ յոգնած ենք, մտահոգուած ենք կամ քաղցած ենք: Մեր լաւ վարքագիծը մենք վերագրում ենք միայն ինքներս մեզ:

Կ'ուզենայի Ձեր ուշադրութիւնը հրաւիրել երկու հիմնադրոյթի վրայ: Առաջինն այն է, որ մարդկային էակները ողջ աշխարհում կիսում են այն հետաքրքրական գաղափարը, որ իրենք պէտք է իրենց պահեն որոշակի ձեւով եւ չեն կարողանում ազատուել այդ գաղափարից: Երկրորդն այն է, որ իրականում նրանք այդպէս չեն վարւում: Նրանք գիտեն բնութեան օրէնքը, եւ նրանք խախտում են այն: Այս երկու փաստերի վրայ է հիմնուած պատկերացումը մեր մասին եւ այն տիեզերքի, ուր մենք ապրում ենք:

2. Որոշ առարկութիւններ

Եթէ այս փաստերը հանդիսանում են որպէս հիմք, ապա նախքան շարունակելը ճիշտ կը լինի, որ ես կանգ առնեմ այդ հիմքն ամրապնդելու համար: Ստացուած նամակներից մի քանիսը վկայում են, որ շատ մարդկանց համար դժուար է հասկանալ, թէ ինչ է Մարդկային բնութեան օրէնքը, կամ Բարոյականութեան օրէնքը, կամ Քաղաքավարութեան կանոնները:

Օրինակ, որոշ մարդիկ ինձ գրել են. «Միթէ՞ այն, ինչ Դուք անուանում էք Բարոյականութեան օրէնք, մեր հոտային բնազդը չէ, եւ միթէ՞ այն չի զարգացել ճիշտ այնպէս, ինչպէս մեր միւս բնազդները»: Դէ ինչ, ես չեմ ժխտում, որ կարող ենք ունենալ հոտային բնազդ, բայց դա այն չէ, ինչ ես նկատի ունեմ Բարոյականութեան օրէնք ասելով: Բոլորս գիտենք, թէ ինչ զգացում է լինում բնազդային ցանկութեան դէպքում՝ լինի դա մայրական բնազդ, թէ սեռական բնազդ, թէ քաղցը յագեցնելու բնազդ: Դուք զգում էք որոշակի կերպով վարուելու սաստիկ ցանկութիւն: Եւ, ի հարկէ, մենք երբեմն մեծ ցանկութիւն ենք ունենում օգնելու մէկ այլ մարդու, ինչն անկասկած բխում է հոտային բնազդից: Բայց օգնելու ցանկութիւնը բոլորովին տարբերւում է օգնելու պարտաւորուածութեան զգացումից՝ անկախ այն բանից, դուք դա ուզում էք, թէ ոչ: Ենթադրենք, դուք օգնութեան կանչ էք լսում վտանգի ենթարկուող մարդու կողմից: Դուք հաւանաբար կը զգաք երկու ցանկութիւն. մէկը՝ օգնելու ցանկութիւնն է (ելնելով հոտային բնազդից), միւսը՝ վտանգից հեռու մնալու ցանկութիւնն է (ելնելով ինքնապաշտպանութեան բնազդից): Բայց, ի լրումն այս երկու բնազդների, դուք կը զգաք նաեւ մի երրորդ բան, որը ձեզ կը յուշի, որ դուք պէտք է հետեւէք օգնելու բնազդին եւ ճնշէք փախչելու բնազդը: Այն բանը, որը դատաւորի դեր է ստանձնում երկու բնազդների միջեւ եւ որոշում, թէ ո՛ր բնազդին պէտք է հետեւել, չի կարող լինել դրանցից ոչ մէկը: Դուք կարող էք նոյն սկզբունքով ասել, որ նոտաների էջը, որը ձեզ յուշում է, թէ տուեալ պահին ինչ նոտա նուագէք դաշնամուրի վրայ, ինքն էլ հէնց հանդիսանում է ստեղնաշարի ստեղներից մէկը: Բարոյականութեան օրէնքը թելադրում է մեզ, թէ ո՛ր հնչիւնը մենք պէտք է նուագենք, իսկ մեր բնազդները սոսկ ստեղներն են:

Մէկ այլ տարբերակ էլ կայ համոզուելու, որ Բարոյականութեան օրէնքը սոսկ մեր բնազդներից մէկը չէ: Եթէ երկու բնազդների միջեւ հակասութիւն կայ, եւ մարդու բանականութիւնում բացի բնազդներից ուրիշ բան չկայ, ապա երկու բնազդներից ակնյայտօրէն կը յաղթի ուժեղագոյնը: Բայց այն պահին, երբ մենք առաւել հասու ենք Բարոյականութեան օրէնքին, այն սովորաբար մեզ յուշում է հետեւել այդ երկու բնազդներից առաւել թոյլ բնազդին: Դուք, հաւանաբար, աւելի շատ ուզում էք անվտանգ լինել, քան օգնել խեղդուող մարդուն: Սակայն Բարոյականութեան օրէնքը, այնուհանդերձ, յուշում է ձեզ նրան օգնել: Եւ միթէ՞ ճիշտ չէ, որ այն մեզ յաճախ ստիպում է փորձել աւելի ուժեղացնել ճիշտ ազդակը, քան այն կայ իր բնական վիճակում: Ուզում եմ ասել, որ մենք յաճախ մեր պարտքն ենք համարում խթանել մեր հոտային բնազդները, արթնացնելով մեր երեւակայութիւնը կամ

խղճի զգացումը, կամ այլ յատկանիշներ այն աստիճանի, որ մեր մէջ բաւարար ուժ գտնենք բարի գործ անելու համար: Սակայն մենք հաստատապէս բնազդով չէ, որ առաջնորդւում ենք, երբ բարի գործ անելու նպատակով խթանում ենք որեւէ բնազդ, որն իրականում ուժգին չէ: Այն ուժը, որը ձեզ ասում է. «Ձեր հոտային բնազդը քնած է: Արթնացրէք այն», չի կարող ինքը լինել հոտային բնազդ: Այն, ինչը ձեզ ասում է, թէ ո՛ր նոտան պէտք է աւելի բարձր հնչի դաշնամուր նուագելիս, չի կարող ինքն էլ միաժամանակ լինել այդ նոտան:

Այդ հարցին կարելի է նայել երրորդ տեսանկիւնից: Եթէ Բարոյականութեան օրէնքը լինէր մեր բնազդներից մէկը, ապա կարող էինք մեր ներսում մատնանշել որեւէ մղում, որը կ'անուանէինք «լաւ մղում» եւ որը միշտ համահունչ կը լինէր ճիշտ վարուելակերպին: Բայց չենք կարող դա անել: Մենք չունենք այնպիսի մղում, որը Բարոյականութեան օրէնքով ստիպուած լինէինք ճնշել կամ խթանել: Սխալ կը լինի կարծել, թէ մեր մղումներից մի քանիսը, ինչպէս մայրական սէրը կամ հայրենասիրութիւնը, լաւն են, իսկ միւսները, ինչպէս սեռական կամ մարտական բնազդները՝ վատն են: Պարզապէս կեանքում այն իրավիճակները, երբ մարտական բնազդը կամ սեռական ցանկութիւնը կարիք ունեն զսպուելու, պատահում են առաւել յաճախ, քան երբ կարիք է լինում զսպել մայրական սէրը կամ հայրենասիրութիւնը: Սակայն կան իրավիճակներ, երբ ամուսնացած մարդու պարտականութիւնն է խթանել իր սեռական մղումները, կամ զինուորի պարտականութիւնն է խթանել մարտական բնազդը: Կարող են նաեւ իրավիճակներ լինել, երբ անհրաժեշտ է լինում սահմանափակել մօր սէրն իր երեխաների հանդէպ կամ մարդու սէրն իր հայրենիքի հանդէպ, այլապէս դա կարող է յանգեցնել այլ մարդկանց երեխաների կամ այլ երկրների ժողովուրդների հանդէպ անարդար վերաբերմունքի: Աւելի ստոյգ, չկան այնպիսի հասկացութիւններ, ինչպիսիք են լաւ կամ վատ մղումները: Վերադառնանք դաշնամուրի օրինակին: Այն չունի երկու տեսակի նոտաներ՝ «Ճիշտ» եւ «Սխալ» նոտաներ: Իւրաքանչիւր նոտա մի պահին ճիշտ է, միւս պահին՝ սխալ: Բարոյականութեան օրէնքը որեւէ մէկ բնազդ չէ, կամ բնազդների որեւէ համակցութիւն չէ: Դա այն է, ինչն ուղղորդում է մեր բնազդները՝ համապատասխանեցնելով շրջապատող կեանքին (ինչը մենք անուանում ենք առաքինութիւն կամ ճիշտ վարքագիծ):

Ի դէպ, այս տեսակէտն ունի գործնական մեծ նշանակութիւն: Ամենավտանգաւոր բանը, որ կարող էք անել, դա բնական մղումներից որեւէ մէկն առանձնացնելն է ու դրան ամէն գնով հետեւելը: Չկայ մի բնական մղում, որը մեզ չվերածի սատանայի՝ եթէ մենք այն վերածենք անվերապահ նպատակի: Գուցէ մտածէք, թէ մարդկութեան հանդէպ սէրը անվտանգ է, բայց այդպէս չէ: Եթէ Դուք անտեսէք արդարութիւնը, ապա կը յայտնուէք մի իրավիճակում, ուր կը սկսէք խախտել պայմանագրերն ու կեղծ վկայութիւններ տալ, «յանուն մարդկութեան բարօրութեան» եւ, ի վերջոյ, կը վերածուէք դաժան ու դաւաճան մարդու:

Որոշ մարդիկ ինձ ուղղուած իրենց նամակներում հարցնում են. «Գուցէ այն, ինչ Դուք անուանում էք Բարոյականութեան օրէնք, սոսկ հասարակական սովորո՞յթ է, մի բան, որին մենք հասնում ենք կրթութեան շնորհիւ»: Կարծում եմ, այստեղ թիւրըմբռնում կայ: Այն մարդիկ, ովքեր տալիս են այդ հարցը, գտնում են, որ եթէ մենք ինչ-որ բան սովորել ենք ծնողներից կամ ուսուցիչներից, ապա դա պէտք է ստեղծուած լինի մարդկանց կողմից: Բայց դա այդպէս չէ: Մենք բոլորս դպրոցում սովորել ենք բազմապատկման աղիւսակը: Երեխան, որը միայնակ մեծացել է ամայի կղզում, չի իմանայ այդ աղիւսակը: Բայց դրանից, անշուշտ, չի հետեւում, թէ բազմապատկման աղիւսակը պարզապէս հասարակական սովորոյթի արդիւնք է, մի բան, որ մարդկային արարածները յօրինել են իրենց համար եւ ցանկութեան դէպքում

կարող էին այլ կերպ յօրինել: Ես լիովին համամիտ եմ, որ Քաղաքավարութեան կանոնները մենք սովորում ենք ծնողներից եւ ուսուցիչներից, ընկերներից ու գրքերից, ճիշտ այնպէս, ինչպէս սովորում ենք ցանկացած այլ բան: Բայց մեր սովորած կանոնների մի մասը պարզապէս մարդկային պայմանաւորուածութեան արդիւնք են եւ կարող էին այլ կերպ լինել. օրինակ, մենք սովորում ենք շարժուել ճանապարհի աջ կողմով, բայց կարող էր լինել նաեւ ձախ մասով շարժուելու կանոն: Մեր սովորած կանոնների միւս մասը, ինչպէս օրինակ մաթեմատիկան, իրական ճշմարտութիւններ են: Հարցն այն է, թէ կանոնների ո՞ր դասին է պատկանում Մարդկային բնութեան օրէնքը:

Երկու պատճառ կայ պնդելու, որ այդ օրէնքը պատկանում է այն նոյն դասին, որին պատկանում է նաեւ մաթեմատիկան: Առաջինը, ինչպէս ասել եմ առաջին գլխում, այն է, որ չնայած տարբերութիւններ կան տարբեր ժամանակաշրջանների ու տարբեր երկրների բարոյական արժէքների միջեւ, այնուհանդերձ այդ տարբերութիւնները մեծ չեն, կամ այնքան մեծ չեն, որքան մարդկանցից շատերը պատկերացնում են: Եւ դուք կարող էք տեսնել նոյն օրէնքը տարբեր ժամանակաշրջանների ու տարբեր երկրների բարոյական արժէքների հիմքում: Մինչդեռ սովորական պայմանաւորուածութիւնները, ինչպիսիք են ճանապարհային կանոնները կամ մարդկանց զգեստների տեսակները, կարող են անսահմանօրէն տարբերուել միմեանցից:

Երկրորդ պատճառը հատեւեալն է: Երբ մտածում էք տարբեր ժողովուրդների բարոյական արժեհամակարգերի միջեւ եղած տարբերութիւնների մասին, մտածո՞ւմ էք, արդեօք, որ մի ժողովրդի բարոյախօսութիւնն աւելի լաւն է կամ վատն է, քան միւսը: Արդեօք որոշ փոփոխութիւնները չէի՞ն բարելաւի այն: Եթէ ոչ, ապա երբեք չէր կարող լինել բարոյական առաջընթաց: Առաջընթաց չի նշանակում լոկ փոփոխութիւն, այլ փոփոխութիւն դէպի լաւը: Եթէ բարոյական ոչ մի արժեհամակարգ աւելի ճիշտ կամ աւելի լաւը չէ, քան միւսը, ապա իմաստ չէր ունենայ գերադասել քաղաքակիրթ հասարակութեան բարոյականութիւնը վայրենիների բարոյականութիւնից, կամ Քրիստոնէական բարոյականութիւնը նացիստական բարոյականութիւնից: Իրականում մենք, ի հարկէ, հաւատում ենք, որ որոշ բարոյախօսութիւններ աւելի լաւն են, քան միւսները: Մենք հաւատում ենք, որ այն մարդիկ, ովքեր փորձում էին փոխել իրենց ժամանակի բարոյականութեան գաղափարները եւ կոչւում էին բարեփոխիչներ, աւելի լաւ էին հասկանում բարոյականութեան խնդիրները, քան իրենց հարեւանները: Շատ լաւ: Բայց երբ դուք ասում էք, թէ բարոյական մի արժեհամակարգն աւելի լաւն է, քան միւսը, փաստօրէն դուք դրանք գնահատում էք մի չափորոշիչով, ասելով, որ դրանցից մէկն աւելի շատ է համապատասխանում այդ չափորոշիչին, քան միւսը: Բայց չափորոշիչը, որով կատարւում է երկու բանի չափումը, պէտք է տարբերուի այդ երկուսից: Փաստօրէն, դուք այդ երկուսը համեմատում էք ինչ-որ իրական բարոյականութեան հետ, ընդունելով, որ գոյութիւն ունի մի այնպիսի բան, ինչպիսին է իրական արդարութիւնը, անկախ այն բանից, թէ ինչ են մտածում մարդիկ եւ անկախ այն բանից, որ որոշ մարդկանց գաղափարներն աւելի մօտ են այդ իրական արդարութեանը, քան միւսներինը: Կամ այսպէս ասենք: Եթէ ձեր բարոյական արժէքներն աւելի ճիշտ են, քան նացիստներինը, ուրեմն պէտք է լինի ինչ-որ բան՝ մի իրական բարոյականութիւն, որն իբրեւ չափորոշիչ ծառայի այդ երկուսի համար: Պատճառը, թէ ինչու ձեր պատկերացումը Նիւ Եորքի մասին կարող է լինել ճշմարիտ կամ նուազ ճշմարիտ, քան իմն է, կայանում է նրանում, որ Նիւ Եորքը իրական վայր է եւ այն գոյութիւն ունի անկախ այն բանից, թէ ինչ է մտածում մեզնից իւրաքանչիւրն այդ մասին: Եթէ իւրաքանչիւրս «Նիւ Եորք» ասելով նկատի ունենար պարզապէս «այն քաղաքը, որը ինքս եմ

պատկերացնում», ապա ինչպէ՞ս կարող էր մեզնից մէկի պատկերացումն այդ քաղաքի մասին աւելի ճիշտ լինել, քան միւսինը: Այդ դէպքում խօսք չէր լինի մէկի իրաւացիութեան եւ միւսի սխալի մասին: Նոյն կերպ, եթէ Քաղաքավարութեան կանոնները պարզապէս նշանակէին «այն ամէնը, ինչին հաւանութիւն է տալիս իւրաքանչիւր ժողովուրդ», ապա անիմաստ կը լինէր ասել, թէ ժողովուրդներից մէկն աւելի ճիշտ է իր գնահատականներում, քան միւսը: Անիմաստ կը լինէր ասել, թէ աշխարհը երբեւէ կարող է դառնալ բարոյապէս աւելի լաւը կամ աւելի վատը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ չնայած քաղաքավարութեան մասին մարդկանց գաղափարների միջեւ եղած տարբերութիւնները յաճախ ձեզ ստիպում են կասկածել վարուեցողութեան իրական օրէնքի գոյութեանը, այնուամենայնիւ այն փաստը, որ մենք հակուած ենք մտածելու այդ տարբերութիւնների մասին, հակառակն է վկայում: Եւս մի խօսք, նախքան աւարտելը: Ես հանդիպել եմ մարդկանց, որոնք չափազանցնում են տարբերութիւնները, քանի որ նրանք չեն զանազանում բարոյախօսութեան տարբերութիւնները փաստերին հաւատալու տարբերութիւններից: Օրինակ, մի մարդ ինձ ասաց. «Երեք հարիւր տարի առաջ մարդիկ Անգլիայում վհուկներին սպանում էին: Դուք դա՞ էք անուանում Մարդկային բնութեան օրէնք կամ Ճիշտ վարուելակերպի օրէնք»: Բայց այսօր, անշուշտ, վհուկներ չսպանելու պատճառն այն է, որ մենք չենք հաւատում վհուկների գոյութեանը: Եթէ մենք հաւատայինք, եթէ մենք իրօք մտածէինք, որ մեր շրջապատում կան մարդիկ, որոնք իրենց հոգին ծախել են սատանային եւ դրա դիմաց նրանից ստացել են գերբնական ուժ, եւ որ նրանք օգտագործում են այդ ուժը իրենց հարեւաններին սպանելու կամ գժուեցնելու համար, կամ եղանակը վատացնելու համար, ապա մենք բոլորս, անշուշտ, կը համաձայնուէինք, որ եթէ մէկն արժանի է մահապատժի, ապա դա հէնց նրանք են՝ այդ անարգ դաւաճանները: Այստեղ չկայ բարոյական սկզբունքի տարբերութիւն. տարբերութիւնը սոսկ փաստի հանդէպ վերաբերմունքն է: Այն, որ մենք չենք հաւատում վհուկների գոյութեանը, կարող է դիտուել որպէս մեծ առաջընթաց գիտութեան ասպարէզում: Սակայն որեւէ բարոյական առաջընթաց չկայ այն բանում, որ վհուկները մահուան չեն դատապարտւում, եթէ գիտէք, որ դրանք գոյութիւն չունեն: Դուք մարդուն բարեսիրտ չէիք անուանի այն բանի համար, որ նա դադարել է տանը մկան թակարդներ լարել, եթէ իմանայիք, որ նա համուզուած է, որ տանն այլեւս մկներ չկան:

3. Օրէնքի իրողութիւնը

Այժմ վերադառնամ մարդկութեանը բնորոշ երկու տարօրինակ առանձնայատկութիւններին, որոնց մասին խօսել եմ առաջին գլխի վերջում: Մէկն այն է, որ մարդիկ հակուած են մտածելու, թէ իրենք պէտք է հետեւեն որոշակի վարքագծի կանոնների, որն այլ կերպ դուք անուանում էք ազնիւ խաղի կանոններ, կամ պարկեշտութեան, կամ բարոյականութեան, կամ բնական օրէնքի կանոններ: Երկրորդը կայանում է նրանում, որ իրականում նրանք այդպէս չեն վարւում: Այժմ ձեզնից ոմանք կը զարմանան, թէ ինչու եմ այդ իրավիճակն անուանում տարօրինակ: Ձեզ այն կարող է թուալ ամենաբնական իրավիճակն աշխարհում: Գուցէ մտածէք, թէ ես բաւական խիստ եմ մարդկային ցեղի նկատմամբ: Վերջապէս, կարող էք ասել, որ այն, ինչը ես անուանում եմ չարի եւ բարու օրէնքի խախտում, պարզապէս վկայում է, որ մարդիկ կատարեալ չեն: Իսկ ինչո՞ւ եմ ես մարդկանցից ակնկալում կատարելութիւն: Դա կը լինէր ճիշտ հարցադրում, եթէ ես փորձէի ճշտել, թէ որքանով ենք մենք մեղաւոր, որ չենք վարւում այնպէս, ինչպէս կ'ուզէինք, որ ուրիշները վարուէին: Բայց ես ամենեւին չունեմ այդպիսի մտադրութիւն: Տուեալ պահին ինձ չի հետաքրքրում մեղաւորութեան հարցը. ես փորձում եմ գտնել ճշմարտութիւնը: Եւ այս տեսանկիւնից, հէնց միայն գաղափարն անկատարութեան մասին, որ մենք այնպիսին չենք, ինչպիսին պէտք է լինենք, ունի որոշակի իմաստ:

Որեւէ առարկայ, ինչպէս օրինակ՝ քարը կամ ծառը, այնպիսին է, ինչպիսին կայ, եւ անիմաստ է ասել, որ այն պէտք է լինի այլ կերպ: Դուք, ի հարկէ, կարող էք ասել, որ քարը «սխալ ձեւ» ունի, եթէ մտադիր էք այն օգտագործել այգում ձեւաւորման նպատակով, կամ որ ծառը վատն է, որովհետեւ բաւարար ստուեր չունի: Բայց ձեր ասածը նշանակում է, որ այդ քարը կամ ծառը չեն համապատասխանում ձեր նպատակներին: Դրա համար դուք չէք մեղադրում այդ իրերին, եթէ ի հարկէ չէք կատակում: Դուք գիտէք, որ եղանակի եւ հողի պատճառով ծառը չէր կարող ուրիշ տեսակ լինել: Այն, ինչ մեր տեսանկիւնից անուանում ենք «վատ» ծառ, ենթարկւում է բնութեան օրէնքներին ճիշտ այնպէս, ինչպէս «լաւ» ծառը:

Դուք նկատեցի՞ք, թէ ինչ է դրանից հետեւում: Դրանից հետեւում է, որ այն, ինչ սովորաբար անուանում ենք բնութեան օրէնք, օրինակ՝ բնական պայմանների ազդեցութիւնը ծառի ձեւաւորման վրայ, գուցէեւ չի կարելի անուանել օրէնք բառի բուն իմաստով: Երբ ասում ենք, որ ընկնող քարերը միշտ ենթարկւում են ձգողականութեան օրէնքին, ըստ էութեան, մենք նկատի ունենք, որ «քարերը միշտ այդպէս են անում»: Չէ՞ որ դուք չէք մտածում, որ երբ քարը բաց են թողնում ձեռքից, այն յանկարծ յիշում է, որ հրամայուած է ընկնել գետնին: Դուք պարզապէս նկատի ունէք, որ քարն իսկապէս ընկնում է: Այլ կերպ ասած, դուք չէք կարող վստահ լինել, որ փաստերից բացի կայ եւս մի բան՝ մի օրէնք այն մասին, թէ ինչ պէտք է կատարուի ի տարբերութիւն իրականում կատարուածի:

Բնութեան օրէնքները, ինչ վերաբերում է ծառերին ու քարերին, կարող են միայն նշանակել, թէ ինչ է իրականում կատարւում բնութեան մէջ: Բայց երբ անդրադառնում էք Մարդկային բնութեան օրէնքին, պարկեշտ վարքագծի կանոններին, դուք տեսնում էք այլ իրողութիւն: Այդ օրէնքն, անշուշտ, չի նշանակում «այն, ինչ անում են մարդիկ իրականում», որովհետեւ, ինչպէս արդէն ասել եմ, մարդկանց մեծամասնութիւնը երբեք չի ենթարկւում այդ օրէնքին, եւ նրանցից ոչ մէկը լիովին չի ենթարկւում այդ օրէնքին: Ձգողականութեան օրէնքը ձեզ ասում է, թէ ինչ կ'անի քարը, եթէ այն գցեք: Իսկ Մարդկային բնութեան օրէնքն ասում է, թէ ինչ պէտք է անեն մարդիկ եւ ինչ չպէտք է անեն: Ուրիշ խօսքով, երբ գործ ունէք մարդկանց հետ, ապա իրական փաստերից բացի դուք գործ ունէք նաեւ մի ուրիշ բանի հետ: Դուք ունէք փաստեր

(ինչպէս են վարւում մարդիկ) եւ ունէք մի ուրիշ բան եւս (ինչպէս պէտք է վարուեն մարդիկ): Տիեզերքի միւս բոլոր բնագաւառներում բացի փաստերից չկայ ուրիշ բանի անհրաժեշտութիւն: Էլեկտրոններն ու մոլեկուլներն իրենց պահում են որոշակի ձեւով, եւ դրան հետեւում են որոշակի արդիւնքներ, ու այդպիսով հարցը սպառւում է (չնայած, ես չեմ կարծում, որ դրանով հարցը սպառւում է, ինչպէս կը տեսնէք յետագայ բաժնում: Ես նկատի ունեմ, որ դա հնարաւոր է այնքանով, որքանով այսօրուայ մեր ունեցած փաստարկներն են թոյլ տալիս այդպէս մտածել): Մինչդեռ մարդիկ իրենց պահում են որոշակի ձեւով, բայց դրանով հարցը չի սպառւում, որովհետեւ դուք գիտէք, որ նրանք պէտք է իրենց պահեն ուրիշ ձեւով:

Սա, իսկապէս, այնքան տարօրինակ է, որ մարդիկ փորձում են դա բացատրել այս կամ այլ կերպ: Օրինակ, փորձենք բացատրել հետեւեալ կերպ. երբ ասում էք, թէ մարդը չպէտք է վարուի այնպէս, ինչպէս վարւում է, դուք նկատի ունէք այն նոյնը, երբ ասում էք, որ քարը սխալ ձեւ ունի, այսինքն այդ մարդու վարքագիծը ձեզ անյարմարութիւն է պատճառում: Բայց սա սխալ բացատրութիւն է: Այն մարդը, որը գնացքում զբաղեցրել է անկիւնային նստատեղը, որովհետեւ նա առաջինն է եկել, եւ այն մարդը, որը սողոսկել է այդ անկիւնային տեղը՝ տեղափոխելով իմ պայուսակը, երբ ես մէջքով շրջուել եմ դէպի իրեն, ինձ հաւասարապէս անյարմարութիւն են պատճառում: Բայց երկրորդ մարդուն ես մեղադրում եմ, իսկ առաջինին՝ ոչ: Ես չեմ բարկանում (գուցէ միայն մի պահ՝ նախքան սթափուելը) այն մարդու վրայ, որը պատահաբար ոտք է գցում իմ առաջ: Բայց ես բարկանում եմ այն մարդու վրայ, որը փորձում է դիտաւորեալ ոտք գցել իմ առաջ, եթէ նոյնիսկ դա իրեն չի յաջողւում: Այսպիսով, առաջինը ինձ նեղութիւն պատճառեց, իսկ երկրորդը՝ ոչ: Երբեմն վարքագիծը, որը ես անուանում եմ վատ, ինձ բոլորովին չի վնասում, նոյնիսկ հակառակը: Պատերազմում իւրաքանչիւր կողմ պատրաստ է օգտուել հակառակորդ կողմի դաւաճանի ծառայութիւններից: Բայց օգտուելով նրա ծառայութիւններից եւ վճարելով նրան, երկու կողմն էլ դաւաճանին նայում են որպէս սրիկայի: Այսպիսով, դուք չէք կարող ուրիշների վարքագիծն անուանել պարկեշտ, ղեկավարուելով միայն ձեզ համար այդ վարքագծի օգտակարութեան չափանիշով: Ինչ վերաբերում է մեր պարկեշտ վարքագծին, կարծում եմ մեզնից ոչ մէկը չի դիտարկում այն որպէս վարքագիծ, որը մեզ օգուտ է բերում: Պարկեշտ վարքագիծ նշանակում է բաւարարուել երեսուն շիլինգով, երբ կարող էիք ստանալ երեք ֆունտ, ազնուօրէն կատարել տնային աշխատանքը, երբ կարելի էր հեշտ արտագրել, թողնել աղջկան հանգիստ, երբ կարող էիք օգտուել նրա թուլութիւնից, մնալ վտանգաւոր տեղում, երբ կարող էիք ապահով տեղ գնալ, կատարել խոստումները, երբ աւելի հեշտ էր մոռանալ դրանք, ասել ճշմարտութիւնը, եթէ անգամ յիմարի տպաւորութիւն թողնէք դրա պատճառով:

Որոշ մարդիկ ասում են, թէ չնայած պարկեշտ վարքագիծը օգուտ չի բերում տուեալ մարդուն տուեալ պահին, այնուամենայնիւ այն օգուտ է բերում մարդկութեանն ընդհանրապէս, եւ, հետեւաբար, այստեղ ոչ մի առեղծուած չկայ: Մարդիկ, ի վերջոյ, բաւականաչափ խելացի են: Նրանք հասկանում են, որ կարող են երջանիկ լինել կամ իրենց զգալ իրական անվտանգութեան մէջ միայն այն հասարակութիւնում, որտեղ իւրաքանչիւրը ազնիւ է խաղում: Եւ հէնց այդ պատճառով է, որ նրանք փորձում են իրենց պարկեշտ պահել: Ի հարկէ, լիովին հասկանալի է, որ անվտանգութիւնը եւ երջանկութիւնը կարող են լինել այն հասարակութիւնում, որտեղ անհատները, խմբերը եւ ժողովուրդները միմեանց նկատմամբ ազնիւ են, արդար եւ բարեացակամ: Եւ սա աշխարհում ամենակարեւոր ճշմարտութիւններից մէկն է: Բայց այստեղ մենք տեսնում ենք թոյլ կողմ, երբ փորձում ենք դրա միջոցով բացատրել

մեր մօտեցումը Բարու եւ Չարի խնդրին: Եթէ մենք հարցնենք՝ «Ինչո՞ւ ես պէտք է լինեմ անեսասէր», եւ դուք պատասխանէք՝ «Որովհետեւ դա լաւ է հասարակութեան համար», ապա դրան կարող է հետեւել նոր հարց՝ «Ինչո՞ւ ես պէտք է մտածեմ, թէ ինչն է լաւ հասարակութեան համար, եթէ դա ինձ օգուտ չի տալիս», եւ դուք կ'ասէք՝ «Որովհետեւ դու պէտք է լինես անեսասէր», որն էլ մեզ կը բերի այն տեղը, որտեղից սկսեցինք: Դուք ասում էք, թէ ինչն է ճիշտ, բայց աւելին չէք ասում: Եթէ մի մարդ հարցնի, թէ ո՞րն է ֆուտբոլ խաղալու իմաստը, լաւ չի լինի ասել՝ «Որպէսզի գոլ խփեն», քանի որ գոլ խփելը դա հէնց ինքը խաղն է, այլ ոչ թէ խաղի պատճառը: Ձեր պատասխանը պարզապէս կը նշանակէր, որ «ֆուտբոլը դա ֆուտբոլ է», եւ դա, անշուշտ, ճիշտ է, բայց չարժէ դրա մասին խօսել: Այդ նուն ձեւով, եթէ մէկը հարցնում է, թէ ինչ իմաստ ունի պարկեշտ լինելը, լաւ չի լինի պատասխանել՝ «Որպէսզի օգուտ ստանայ հասարակութիւնը»: Չէ՞ որ «փորձել օգուտ բերել հասարակութեանը», այլ խօսքերով՝ լինել անեսասէր (որովհետեւ «հասարակութիւն» ի վերջոյ նշանակում է «ուրիշ մարդիկ»), դա ինքնին հանդիսանում է պարկեշտ վարքագծի բաղկացուցիչ մասերից մէկը: Այսպիսով, դուք փաստօրէն ասում էք, որ պարկեշտ վարքագիծը դա պարկեշտ վարքագիծ է: Դուք դրանից աւելին չէիք ասի, եթէ կանգ առնէիք այս յայտարարութեան վրայ. «Մարդիկ պէտք է լինեն անեսասէր»: Հէնց այստեղ ես ուզում եմ կանգ առնել: Մարդիկ պէտք է լինեն անեսասէր, պէտք է լինեն արդար: Դա չի նշանակում, որ նրանք անեսասէր են կամ իրենց դուր է գալիս լինել անեսասէր. դա նշանակում է, որ նրանք պէտք է լինեն այդպիսին: Բարոյականութեան օրէնքը կամ Մարդկային բնութեան օրէնքը պարզապէս չի արձանագրում մարդկային վարքագծի փաստը այնպէս, ինչպէս ձգողականութեան օրեքն է արձանագրում այն փաստը, թէ ինչ է լինում ծանր առարկաների հետ ընկնելու պահին: Միւս կողմից, Մարդկային բնութեան օրէնքը միայն մտացածին բան չէ, որովհետեւ մենք չենք կարող մոռանալ դրա մասին: Իսկ եթէ մոռանայինք, ապա այն ամէնը, որ խօսում ու մտածում ենք մարդկանց մասին, կը վերածուէր անմտութեան: Եւ դա պարզապէս յայտարարութիւն չէ, թէ ինչպէս կ'ուզէինք, որ մարդիկ իրենց պահեն մեր յարմարութեան համար: Որովհետեւ այսպէս կոչուած վատ կամ անազնիւ վարքագիծը միշտ չէ, որ համապատասխանում է մեզ համար անյարմար վարքագծին, եւ երբեմն կարող է լինել հակառակը: Հետեւաբար, Չարի եւ Բարու օրէնքը կամ Մարդկային բնութեան օրէնքը, կամ ինչ էլ որ անուանենք այն, պէտք է լինի մի իրականութիւն, որը գոյութիւն ունի անկախ մեզնից: Բայց եւ այնպէս, այդ օրէնքը փաստ չէ բառի բուն իմաստով այնպէս, ինչպէս մեր վարքագիծն է փաստ: Սկսում է թուալ, թէ մենք պէտք է ընդունենք, որ գոյութիւն ունեն իրականութեան մէկից աւելի տեսակներ, տուեալ դէպքում՝ մարդկային վարքագծի սովորական փաստերի ետեւում թաքնուած է ակնյայտօրէն իրական մի օրէնք, որը մեզնից ոչ մէկը չի կազմել, բայց որը ինչպէս պարզեցինք, ազդում է բոլորիս վրայ:

4. Ի՞նչ է թաքնուած օրէնքի ետեւում

Ամփոփենք, թէ ինչ ենք պարզել մինչեւ հիմա: Քարերի, ծառերի եւ այդ տեսակ այլ բաների դէպքում այն, ինչ անուանում ենք Բնութեան օրէնք, ոչ այլ ինչ է, քան խօսքի դարձուածք: Երբ ասում էք, թէ բնութիւնը ենթարկւում է որոշակի օրէնքների, դա միայն նշանակում է, որ բնութիւնը դրսեւորւում է որոշակի ձեւով: Այսպէս կոչուած օրէնքները չեն կարող լինել

օրէնքներ բառի բուն իմաստով, այսինքն մի բան, որ վեր է կանգնած մեր կողմից ուսումնասիրուող բնութեան երեւոյթներից: Բայց մարդու դէպքում այդպէս չէ: Մարդկային բնութեան օրէնքը կամ Չարի ու Բարու օրէնքը պէտք է լինի մի բան, որը վեր է կանգնած մարդու վարուեցողութեան փաստերից: Այս դէպքում, բացի փաստերից, մենք ունենք եւս մի բան՝ օրէնք, որը մենք չենք ստեղծել, բայց որին, ինչպէս գիտենք, պէտք է ենթարկուենք:

Այժմ փորձենք հասկանալ, թէ ինչ է մեզ ասում այս բացայայտումը տիեզերքի մասին, որտեղ մենք ապրում ենք: Այն պահից ի վեր, ինչ մարդիկ սկսեցին մտածել, նրանք ուզում էին իմանալ, թէ ինչ է տիեզերքը եւ ինչպէս է այն առաջացել: Այս հարցի շուրջ, ընդհանուր առմամբ, երկու տեսակէտ կայ: Առաջինը, այսպէս կոչուած, մատերիալիստական տեսակէտն է: Այդ տեսակէտի կողմնակիցները գտնում են, որ մատերիան եւ տարածութիւնը պարզապէս գոյութիւն ունեն, միշտ գոյութիւն են ունեցել, եւ ոչ ոք չգիտի, թէ ինչու: Եւ որ մատերիան, որը դրսեւորուում է հաստատագրուած որոշակի ձեւով, յանկարծ յաջողացրեց ստեղծել այնպիսի էակներ, ինչպիսին մենք են, որոնք ունակ են մտածել: Մի երջանիկ պատահականութեամբ, որը հազարից մէկ է լինում, ինչ-որ բան հարուածեց արեւին, եւ դրա արդիւնքում առաջացան մոլորակներ: Նման մէկ այլ պատահականութեամբ, որի հաւանականութիւնը նախորդից մեծ չէ, այդ մոլորակի վրայ առաջացան կեանքի համար անհրաժեշտ քիմիական նիւթեր եւ համապատասխան ջերմաստիճան: Եւ այդպիսով, այս մոլորակի վրայ մատերիայի մի մասը կենդանութիւն ստացաւ, յետոյ այդ կենդանի արարածները, անցնելով պատահականութիւնների երկար շարքի միջով, զարգացան ու դարձան մեզ նման էակներ:

Երկրորդ տեսակէտը կրօնական է*: (Ծանօրագրութիւնը տես այս գլխի վերջում) Դրա համաձայն տիեզերքի ծագման աղբիւրը աւելի շատ նման է բանականութեան, քան մեզ յայտնի մէկ այլ բանի: Այսինքն այն գիտակից է, ունի նպատակներ եւ նախապատուութիւններ այս կամ այն բանի նկատմամբ: Կրօնական տեսանկիւնից այդ բանականութիւնն է ստեղծել տիեզերքը, մասամբ յանուն որոշ նպատակների, որոնց մասին չգիտենք, բայց մասամբ էլ այն նպատակով, որպէսզի ստեղծի իր նման էակներ, նկատի ունեմ՝ իր նման գիտակցութեամբ օժտուած էակներ: Խնդրում եմ չմտածէք, թէ այս տեսակէտներից մէկը եղել է շատ հին ժամանակներից, իսկ միւսը աստիճանաբար է ձեւաւորուել: Ամէնուրեք, որտեղ ապրել են մտածող մարդիկ, երկու տեսակէտն էլ եղել է: Եւ մի բան էլ նկատեք: Դուք չէք կարող իմանալ գիտութեան միջոցով, թէ այդ երկու տեսակէտներից որն է ճիշտ: Գիտութեան աշխատանքն ընթանում է փորձերի եղանակով: Այն հետեւում է, թէ ինչպէս են իրենց պահում առարկաները, նիւթերը, մասնիկները եւ այլք: Իւրաքանչիւր գիտական յայտարարութիւն, որքան էլ այն բարդ թուա, ի վերջոյ բովանդակում է հատեւեալը. «Ես ուղղեցի աստղադիտակը երկնքի այսինչ հատուածին յունուարի 15-ին գիշերը ժամը 2. 20-ին եւ տեսայ այս եւ այս», կամ՝ «Ես դրեցի որոշ քանակութիւն այս նիւթից անօթի մէջ, տաքացրեցի մինչեւ այսինչ ջերմաստիճանը եւ ստացուեց այս եւ այս»: Չկարծէք, թէ ես խօսում եմ գիտութեան դէմ: Ես միայն ասում եմ, թէ ինչպէս է ընթանում գիտութեան աշխատանքը: Եւ որքան մարդը կրթուած է, այնքան շուտ (յուսով եմ) կը համաձայնուի ինձ հետ, որ հէնց դրանում է կայանում գիտութեան աշխատանքը եւ հէնց դրանում է նրա օգուտը եւ անհրաժեշտութիւնը: Բայց ինչո՞ւ այդ օբյեկտներն ընդհանրապէս գոյութիւն ունեն եւ կա՞յ, արդեօք, ինչ-որ բան՝ տարբերուող որեւէ բան, գիտութեան կողմից ուսումնասիրուող օբյեկտների ետեւում՝ սա գիտական հարցադրում չէ: Եթէ ինչ-որ բան գոյութիւն ունի մեր կողմից դիտարկուող օբյեկտների ետեւում, ապա այն կամ կը մնայ լիովին անյայտ մարդկանց համար, կամ իրեն ճանաչել կը տայ ինչ-որ յատուկ եղանակով: Յայտարարութիւնն այն մասին, որ այդ «ինչ-որ բանը» գոյութիւն ունի կամ,

հակառակը, գոյութիւն չունի, չի կարող արուել գիտութեան կողմից: Եւ իսկական գիտնականները սովորաբար չեն անում նման յայտարարութիւններ: Յաճախ այդպիսի յայտարարութիւններով հանդէս են գալիս լրագրողները եւ յայտնի վիպասանները՝ ձեռք բերելով տուեալներ անաւարտ գիտական ձեռնարկներից: Վերջ ի վերջոյ առողջ բանականութիւնը մեզ ասում է. ենթադրենք, գիտութիւնը մի օր դառնայ այնքան կատարեալ, որ ճանաչի տիեզերքի իւրաքանչիւր մասնիկը: Միթէ՞ պարզ չի, որ տուեալ հարցերը՝ «Ինչի՞ համար է տիեզերքը», «Ինչո՞ւ է այն դրսեւորուում այդպէս, ոչ թէ այլ կերպ», «Արդեօք կա՞յ որեւէ իմաստ տիեզերքի գոյութեան մէջ», կը մնան անպատասխան, ինչպէս եւ նախկինում:

Վիճակը կը լինէր բոլորովին անյոյս, եթէ չլինէր մէկ հանգամանք: Տիեզերքում կայ մի բան, որի մասին մենք գիտենք շատ աւելին, քան կարող էինք իմանալ նրա մասին միայն արտաքին դիտարկումներով: Այդ մի բանը մարդն է: Մենք ոչ միայն ուսումնասիրում ենք մարդկանց, այլեւ ինքներս մարդ ենք: Այս դէպքում մենք ունենք, այսպէս ասած, ներքին տեղեկութիւն, այսինքն գործին տեղեակ ենք: Եւ դրա շնորհիւ գիտենք, որ մարդիկ իրենց զգում են ինչ-որ բարոյականութեան օրէնքի ազդեցութեան տակ, որը իրենք չեն ստեղծել, բայց չեն կարող այն մոռանալ, որքան էլ փորձեն, եւ որին, գիտեն, պէտք է ենթարկուեն: Ուշադրութիւն դարձրէք ահա թէ ինչին: Եթէ որեւէ մէկը ուսումնասիրէր մարդուն կողքից (ինչպէս ուսումնասիրում ենք էլեկտրականութիւնը կամ կաղամբը), չիմանալով մեր լեզուն եւ, հետեւաբար, հնարաւորութիւն չունենալով մեզնից ստանալու որեւէ ներքին տեղեկութիւն, ապա միայն հետեւելով մեր վարքագծին՝ երբեք չէր յանգի այն եզրակացութեան, որ մենք ունենք բարոյականութեան օրէնք: Եւ ինչպէս կարող էր յանգել դրան: Չէ՞ որ նրա դիտարկումները իրեն ցոյց կը տային միայն այն, ինչ մենք անում ենք, իսկ բարոյականութեան օրէնքը ասում է, թէ մենք ինչ պէտք է անենք: Նոյն ձեւով, եթէ քարերը կամ ծառերը ուսումնասիրելիս ինչ-որ բան լինէր փաստերի ետեւում, ապա դիտարկելով այդ փաստերը կողքից, երբեք չէինք հաւատայ, որ կը յայտնաբերենք այդ «ինչ-որ բանը»:

Հարցն, այսպիսով, այլ հարթութիւն է տեղափոխւում: Մենք ուզում ենք իմանալ, արդեօք տիեզերքը պատահաբա՞ր է դարձել այնպիսին, ինչպիսին կայ, առանց որեւէ պատճառի, թէ՞ դրա ետեւում կայ ինչ-որ ուժ, որը դարձրել է տիեզերքը հէնց այդպիսին: Քանի որ այդ ուժը, եթէ այն գոյութիւն ունի, չի կարող լինել տեսանելի փաստերից մէկը, բայց այն իրականութիւն է, որը ստեղծում է այդ փաստերը, ապա միայն փաստերը դիտարկելով մենք չենք յայտնաբերի այդ ուժը: Միայն մի երեւոյթ կայ, որի շնորհիւ կարող ենք իմանալ, թէ արդեօք կա՞յ եւս մի բան, բացի դիտարկուող փաստերից: Այդ երեւոյթը մենք ենք, ու միայն դրա շնորհիւ կարող ենք ասել, որ այդ «ինչ-որ բանը» գոյութիւն ունի:

Այժմ հարցին նայենք միւս կողմից: Եթէ տիեզերքի սահմաններից դուրս լինէր մի ղեկավարող ուժ, այն չէր կարող մեզ երեւալ որպէս տիեզերքի ներսում եղած տարրերից մէկը, ինչպէս ճարտարապետը, որի նախագծով կառուցուած է տունը, չի կարող լինել այդ տան պատը, սանդուղքը կամ բուխարին: Միակ միջոցը, որ կարող ենք յուսալ, այն է, որ այդ ուժը կը դրսեւորուի մեր մէջ ազդեցութեան կամ հրամանի ձեւով՝ փորձելով մեզ թելադրել որոշակի վարքագիծ: Եւ հէնց այդպիսի ազդեցութիւն ենք մենք գտնում մեր մէջ: Անշուշտ, այսպիսի բացայայտումը պէտք է որ կասկածներ առաջացնէր մեզ մօտ: Միակ դէպքը, երբ կարող էիք յուսալ պատասխան ստանալ, տալիս է դրական պատասխան: Իսկ միւս դէպքերում, երբ չէք ստանում պատասխան, դուք տեսնում էք, թէ ինչու չէք կարող այն ստանալ:

Ենթադրենք մէկը ինձ հարցնում է. «Երբ տեսնում էք կապոյտ համազգեստով մարդու, որը գնում է փողոցի երկայնքով եւ իւրաքանչիւր տան մօտ թողնում է թղթէ փոքրիկ փաթեթներ, ինչո՞ւ էք կարծում, որ այդ փաթեթներում նամակներ են»: Ես կը պատասխանէի. «Որովհետեւ ամէն անգամ, երբ նա թողնում է այդպիսի փաթեթ ինձ համար, ես դրա մէջ նամակ եմ գտնում»: Եւ եթէ այդ մարդը առարկէր. «Բայց դուք երբեք չէք տեսել այդ նամակները, որոնք ձեր կարծիքով ստանում են ուրիշ մարդիկ», ես կ'ասէի. «Ի հարկէ ոչ, որովհետեւ դրանք ինձ չէին հասցէագրուած: Ես կռահում եմ փաթեթների պարունակութեան մասին, որոնք ինձ չի թոյլատրւում բացել, այն փաթեթների միջոցով, որոնք կարող եմ բացել»: Նոյն ձեւով մօտենանք քննարկուող մեր հարցին: Միակ փաթեթը, որ ինձ թոյլատրւում է բացել, դա մարդն է: Երբ ես դա անում եմ, յատկապէս երբ բացում եմ որոշակի մարդու, որին անուանում եմ «Ես», ապա յայտնաբերում եմ, որ ինքս ինձնով չեմ ապրում, որ ես ենթարկւում եմ ինչ-որ օրէնքի. ինչ-որ մէկը կամ ինչ-որ բան ուզում է, որ ես ինձ պահեմ որոշակի ձեւով: Ես չեմ կարծում, ի հարկէ, որ եթէ կարողանայի ներթափանցել քարի կամ ծառի մէջ, ես կը գտնէի ճիշտ նոյն բանը, եւ հէնց այդպէս էլ չեմ կարծում, որ այդ փողոցի միւս մարդիկ ստանում են նոյնպիսի նամակներ, ինչպիսիք ես եմ ստանում: Ես ակնկալում էի յայտնաբերել, օրինակի համար, որ քարը պէտք է ենթարկուի ձգողականութեան օրէնքին: Եթէ «նամակներ ուղարկողը» ինձ պարզապէս ասում է, որ ես ենթարկուեմ իմ Մարդկային բնութեան օրէնքին, ապա քարին Նա ստիպում է ենթարկուել իր բնութեան օրէնքներին: Բայց ես ակնկալում էի յայտնաբերել, որ երկու դէպքում էլ գործում է «նամակներ ուղարկողը», Ուժ, որը կանգնած է փաստերի ետեւում, կեանքի Ղեկավարը, Առաջնորդը:

Չմտածէք, թէ ես աւելի արագ եմ ընթանում, քան անհրաժեշտ է: Ես նոյնիսկ հարիւր կիլոմետր չեմ մօտեցել Աստծուն, ինչպիսին նրան ներկայացնում է քրիստոնէական աստուածաբանութիւնը: Այն ամէնը, ինչ արտայայտել եմ մինչեւ հիմա, յանգում է հետեւեալին. գոյութիւն ունի տիեզերքը ղեկավարող ինչ-որ բան, որը յայտնւում է իմ մէջ օրէնքի ձեւով՝ դրդելով ինձ բարիք գործել եւ խղճի խայթ զգալ, երբ չարիք եմ գործում: Կարծում եմ, մենք պէտք է ընդունենք, որ այդ ուժը աւելի շատ նման է բանականութեան, քան մեր իմացած մէկ այլ բանի, որովհետեւ միակ բանը, որ գիտենք բանականութիւնից բացի, դա մատերիան է, եւ դժուար է պատկերացնել, որ մի կտոր մատերիան հրահանգներ է տալիս: Բայց, ի հարկէ, այդ ուժը այնքան էլ նման չէ բանականութեան եւ առաւել քիչ է նման մարդկային անձի:

Տեսնենք, թէ յաջորդ գլխում մեզ կը յաջողուի՞ աւելի շատ իմանալ այդ ուժի մասին: Բայց մի նախազգուշացում. վերջին հարիւրամեակներում Աստծու մասին եղել են մեծ քանակութեամբ երեւակայական մեկնաբանութիւններ: Ես չեմ առաջարկում ձեզ նման բան: Կարող էք այդ ամէնը մտքից հանել:

- Ծանօթագրութիւն: Որպէսզի այս բաժինը կարճ լինի, երբ այն հեռարձակւում էր եթերով, ես նշեցի միայն մատերիալիստական եւ կրօնական տեսակէտները: Բայց որպէսզի պատկերը ամբողջական լինի, ես պէտք է նշէի միջանկեալ տեսակէտի մասին, այսպէս կոչուած «Կենսական ուժի» փիլիսոփայութեան կամ Ստեղծագործական էւոլիւցիայի մասին: Այս փիլիսոփայութիւնը առաւել սրամտօրէն է ներկայացւում Բերնարդ Շոուի ստեղծագործութիւններում, բայց ամենախորիմաստ կերպով այն լուսաբանւում է Բերգսոնի աշխատութիւններում: Այս տեսակէտի

կողմնակիցները գտնում են, որ այն փոքր փոփոխութիւնները, որոնց շնորհիւ կեանքը մեր մոլորակի վրայ էւոլիւցիայ է ապրել ցածր ձեւերից մինչեւ Մարդը, պատահական չեն եղել, այլ պայմանաւորուած են եղել Կեանքի ուժի նպատակասլացութեամբ: Երբ մարդիկ խօսում են այս ուժի մասին, մենք կարող ենք նրանց հարցնել, թէ այդ ուժը, իրենց կարծիքով, արդեօք օժտուա՞ծ է բանականութեամբ: Եթէ այո, ապա «բանականութիւնը, որը ստեղծել է կեանքը եւ այն տանում է դէպի կատարելութիւն», դա ուղղակի Աստուած է, եւ այդպիսով նրանց տեսակէտը նոյնանում է կրօնականի հետ: Եթէ ոչ, ապա ինչ իմաստ ունի ասել, որ «ինչ-որ բան» որն օժտուած չէ բանականութեամբ, ունի «ձգտումներ» կամ «նպատակներ»: Ինձ թւում է, այսպիսի տրամաբանութիւնը կործանարար է նրանց տեսակէտի համար: Ստեղծագործական էւոլիւցիայի գաղափարը շատերին գրաւում է նրանով, որ այն չի զրկում Աստծուն հաւատալու մխիթարանքից, բայց միաժամանակ ազատում է մարդուն այդ հաւատից բխող ոչ այնքան հաճելի հետեւանքներից: Երբ դուք ձեզ կատարելապէս առողջ էք զգում, եւ արեւը շողում է, եւ դուք չէք ուզում մտածել այն մասին, որ ամբողջ տիեզերքը ընդամէնը ատոմների մեխանիկական պար է, հաճելի է մտորել այդ խորհրդաւոր մեծագոյն Ուժի մասին, որն անցնում է դարերի միջով՝ ձեզ կրելով իր վրայ: Եթէ, միւս կողմից, դուք ուզում էք ինչ-որ անազնիւ բան անել, ապա կեանքի ուժը, լինելով կոյր, առանց բանականութեան ու բարոյական հասկացութիւնների, երբեք չի միջամտի ձեր նախաձեռնութիւններին, ինչպէս այն անհանգիստ Աստուածն է միջամտում, որի մասին մեզ պատմել են մանկութեան տարիներին: Կեանքի ուժը դա հնազանդ Աստծու մի տեսակ է; Դուք կարող էք նրա հետ կապուել, երբ ցանկանաք, բայց նա ինքը ձեզ չի անհանգստացնի: Դուք բաւականութիւն էք ստանում կրօնից եւ ոչ մի բանի համար չէք վճարում: Միթէ՞ այս թէորիան ցանկալին որպէս իրականութիւն ընդունելու մեր հակուածութեան մեծագոյն նուաճումն է:

5. Մենք անհանգստանալու պատճառ ունենք

Ես աւարտեցի նախորդ գլուխն այն գաղափարով, որ Բարոյականութեան օրէնքի միջոցով ինչ-որ մէկը կամ ինչ-որ բան նիւթական տիեզերքի սահմաններից դուրս ազդում է մեզ վրայ: Եւ ես կարծում եմ, որ երբ հասայ այդ գաղափարին, ձեզնից մի քանիսը զգացին որոշակի անհանգստութիւն: Դուք կարող էիք նոյնիսկ մտածել, որ ես չար խաղ խաղացի ձեզ հետ, որ ես զգուշօրէն քօղարկում էի «կրօնական բարոյախօսութիւնը», որպէսզի այն նմանեցնեմ փիլիսոփայութեան: Գուցէ դուք պատրաստ էիք լսել ինձ այնքան ժամանակ, քանի դեռ մտածում էիք, թէ ես պէտք է նոր բան ասեմ: Բայց պարզուեց, որ այդ «նորը» ընդամէնը կրօն է: Դէ ինչ, աշխարհն արդէն փորձել է դա, եւ դուք չէք կարող ժամանակը ետ տալ: Եթէ որեւէ մէկը նման զգացումներ ունի, ես կ'ուզէի երեք բան ասել այդ մարդուն:

Առաջինը, ժամանակը ետ տալու վերաբերեալ: Գուցէ դուք մտածէք, թէ ես կատակում եմ, եթէ ասեմ, որ կարող էք ժամացոյցի սլաքը ետ տանել, եւ եթէ ժամացոյցը սխալ է աշխատում, ապա դա խելացի արարք է: Բայց մի կողմ թողնենք ժամացոյցի օրինակը: Մենք բոլորս ձգտում ենք առաջընթացի: Բայց առաջընթաց նշանակում է մօտենալ այն տեղին, որին ուզում ես հասնել: Եւ եթէ դուք սխալ կողմ էք թեքուել, ապա առաջխաղացումը ձեզ չի մօտեցնի ձեր նպատակակէտին: Եթէ դուք սխալ ճանապարհին էք, առաջընթաց նշանակում է շրջուել եւ վերադառնալ ճիշտ ճանապարհ: Իսկ ամենաառաջադէմ մարդը կը լինի նա, ով աւելի շուտ ետ կը գնայ: Մենք բոլորս կարող էինք համոզուել դրանում թուաբանութիւն կատարելիս: Եթէ ես հէնց սկզբից գումարումը սխալ եմ կատարել, ապա որքան շուտ ընդունեմ իմ սխալը ու ետ գնամ, որ նորից սկսեմ, այնքան արագ կը գտնեմ ճիշտ պատասխանը: Առաջադէմ ոչինչ չկայ յամառութեան մէջ, սխալն ընդունելու հրաժարականի մէջ: Եթէ դուք նայէք ժամանակակից աշխարհում տիրող իրավիճակին, ձեզ համար լիովին պարզ կը դառնայ, որ մարդկութիւնը սխալ է գործում: Մենք սխալ ճանապարհին ենք: Իսկ եթէ այդպէս է, մենք պէտք է ետ գնանք: Ետ գնալը ամենաարագ ճանապարհն է դէպի առաջ:

Երկրորդը. իմ դատողութիւնները դեռ այնքան էլ «կրօնական բարոյախօսութիւն» չեն: Մենք դեռ հեռու ենք որեւէ կրօնի Աստծուց, առաւել եւս քրիստոնէական կրօնի Աստծուց: Մենք ընդամէնը մօտեցել ենք ինչ-որ մէկին կամ ինչ-որ բանի, որ կանգնած է Բարոյականութեան օրէնքի ետեւում: Մենք ոչինչ չենք վերցնում Աստուածաշնչից կամ եկեղեցում ասուող խօսքերից: Մենք փորձում ենք հականալ, թէ ինչ կարող ենք իմանալ այդ «ինչ-որ մէկի» մասին մեր սեփական ուժերով: Եւ ես ուզում եմ միանգամայն պարզ լինի, որ այն, ինչ մենք բացայայտում ենք մեր սեփական ուժերով, ցնցող ազդեցութիւն է գործում մեզ վրայ:

Մենք ունենէք երկու փաստ այդ «ինչ-որ մէկի» մասին: Առաջինը, Նրա ստեղծած տիեզերքն է: Եթէ մենք ընդունէինք դա որպէս միակ վկայութիւն Նրա մասին, ապա պէտք է եզրակացնէինք, որ Նա մեծ նկարիչ է (որովհետեւ տիեզերքը հիասքանչ է), բայց նաեւ պէտք է ընդունէինք, որ Նա բոլորովին անգութ է եւ մարդկանց հանդէպ թշնամի է (որովհետեւ տիեզերքը շատ վտանգաւոր ու սարսափեցնող վայր է): Երկրորդ փաստը, որ վկայում է Նրա գոյութեան մասին, դա Բարոյականութեան օրէնքն է, որը Նա դրել է մեր գիտակցութեան մէջ: Եւ այս երկրորդ վկայութիւնն աւելի արժէքաւոր է, քան առաջինը, որովհետեւ դա ներքին տեղեկութիւն է; Դուք Աստծու մասին աւելի շատ էք իմանում Բարոյականութեան օրէնքից, քան տիեզերքի դիտարկումից, ճիշտ այնպէս, ինչպէս դուք աւելի շատ էք իմանում մարդու մասին՝ լսելով, թէ նա ինչ է խօսում, քան նայելով նրա կառուցած տանը: Այժմ, այս երկրորդ փաստի հիման վրայ մենք եզրակացնում ենք, որ տեսանելի տիեզերքից այն կողմ գտնուող էակը ուժգնօրէն հետաքրքրւում է մարդկանց ճիշտ վարուեցողութեամբ՝ նրանց արդար խաղով, նրանց անշահախնդրութեամբ, խիզախութեամբ, հաւատարմութեամբ, ազնուութեամբ եւ ճշմարտասիրութեամբ: Այս լոյսի ներքոյ մենք պէտք է համաձայնուենք քրիստոնէութեան եւ որոշ այլ կրօնների այն պնդման հետ, որ Աստուածը բարի է: Բայց եկէք չշտապենք: Բարոյականութեան օրէնքը մեզ որեւէ հիմք չի տալիս մտածելու, որ Աստուածը բարի է այն իմաստով, որ նա ներողամիտ է, մեղմ է կամ կարեկից է: Բարոյականութեան օրէնքում ներողամտութեան ոչ մի նշուլ չկայ: Այն երկաթի պէս ամուր է: Այն թելադրում է ազնիւ արարք գործել եւ կարծես չի մտահոգւում, թէ որքան ցաւոտ է, վտանգաւոր կամ դժուար այդպէս վարուելը: Եթէ Աստուածը նման է Բարոյականութեան օրէնքին, ուրեմն նա մեղմ չէ: Այս փուլում անիմաստ է ասել, որ «բարի» Աստուած ասելով դուք նկատի ունէք այնպիսի Աստծու, որն ընդունակ է ներել: Չէ՞ որ միայն անհատը կարող է ներել: Իսկ մենք դեռ

չենք կարող պնդել, որ Բարոյականութեան օրէնքի ետեւում գտնուող ուժն աւելի շատ նման է բանականութեան, քան մէկ այլ բանի: Բայց դա դեռ չի նշանակում, որ այդ ուժը նման է անհատի: Եթէ դա զուտ անանձնական բանականութիւն է, ապա, հաւանաբար, իմաստ չունի նրան խնդրել օգնել կամ ներել ձեզ, ճիշտ այնպէս, ինչպէս անիմաստ կը լինէր խնդրել բազմապատկման աղիւսակին ներել ձեզ՝ սխալ հաշուելու համար: Դուք պարզապէս կը ստանայիք սխալ պատասխան: Անօգուտ է նաեւ ասել, որ եթէ Աստուածն այդպիսին է՝ անանձնական բացարձակ բարութիւն է, ապա նա ձեզ դուր չի գալիս, եւ դուք չէք պատրաստւում անհանգստանալ Նրա պատճառով: Անօգուտ է, որովհետեւ ձեր մի մասը Աստծու կողմն է եւ անկեղծօրէն համաձայն է, որ Նա դատապարտում է մարդկային ագահութիւնը, խարդախութիւնը եւ դաժանութիւնը: Դուք, գուցէ, ցանկանայիք, որ այս անգամ, որպէս բացառութիւն, Նա ներողամիտ լինէր ձեր հանդէպ: Բայց հոգու խորքում դուք գիտէք, որ եթէ տիեզերքից այն կողմ գտնուող Ուժն անվերապահօրէն չպախարակի անվայելուչ վարքագիծը, ապա Նա չի լինի բարի: Միւս կողմից մենք գիտենք, որ եթէ գոյութիւն ունի բացարձակ բարութիւն, այն պէտք է ատի մեր արարքների մեծ մասը: Ահա թէ ինչ դժուարին կացութեան մէջ ենք յայտնուել: Եթէ տիեզերքը չի կառավարւում բացարձակ բարութեան կողմից, ուրեմն մեր բոլոր ջանքերը, վերջին հաշուով, անտեղի են: Իսկ եթէ տիեզերքը, այնուամենայնիւ, կառավարւում է բացարձակ բարութեան կողմից, ուրեմն մենք ամէն օր մեզ թշնամի ենք դարձնում Նրա հանդէպ, եւ ամենեւին նման չէ, որ վաղը մենք մի փոքր աւելի լաւը կը դառնանք: Այսպիսով, մեր վիճակը կրկին անյոյս է: Մենք չենք կարող ապրել առանց այդ բարութեան եւ չենք կարող ապրել դրա հետ միասին: Աստուածը մեր միակ մխիթարանքն է, բայց Նա նաեւ գերագոյն սարսափ է ներշնչում. մենք Նրա կարիքը ամէնից շատ ենք զգում եւ Նրանից էլ ամէնից շատ ենք ուզում թաքնուել: Նա մեր միակ հնարաւոր դաշնակիցն է, իսկ մենք մեզ թշնամի ենք դարձրել Նրա հանդէպ: Որոշ մարդիկ ասում են, թէ հանդիպումը դէմ առ դէմ բացարձակ բարութեան հետ ուրախալի կը լինի: Նրանք պէտք է կրկին մտածեն: Նրանք դեռ միայն խաղում են կրօնի հետ: Վերերկրային բարութիւնը կամ մեծ ապահովութիւն է, կամ մեծ վտանգ՝ կախուած այն բանից, թէ ինչպէս էք վերաբերւում դրան: Իսկ մենք սխալ ենք վերաբերւում:

Հիմա ես մօտեցայ երրորդ կէտին: Ընտրելով այս ոլորապտոյտ ճանապարհը ինձ հետաքրքրող բուն նիւթին մօտենալու նպատակով, ես չէի փորձում ձեզ խաբել: Ես ընտրեցի այդ ուղին, որովհետեւ քրիստոնէութիւնը չի կարող հասկանալի լինել, քանի դեռ չէք ծանօթացել այնպիսի փաստերի հետ, որոնք ես նկարագրեցի: Քրիստոնէութիւնը կոչ է անում մարդկանց ապաշխարել, որպէսզի արժանանան ներման: Հետեւաբար, քրիստոնէութիւնը ոչինչ չունի ասելու (որքանով ինձ յայտնի է) այն մարդկանց, որոնք չգիտեն, թէ ինչ են արել, որի համար պէտք է ապաշխարեն եւ որոնք չեն զգում ներման կարիք: Միայն այն բանից յետոյ, երբ դուք հասկանաք, որ, իսկապէս, գոյութիւն ունի Բարոյականութեան օրէնք, ինչպէս նաեւ Ուժ՝ այդ օրէնքի ետեւում, եւ որ դուք խախտել էք այդ օրէնքը ու ձեզ սխալ էք պահել այդ Ուժի նկատմամբ, միայն այդ դէպքում, եւ ոչ մի վայրկեան շուտ, քրիստոնէութիւնը ձեզ համար իմաստ կը ստանայ: Երբ դուք գիտէք, որ հիւանդ էք, դուք լսում էք բժշկի խորհուրդները: Երբ դուք հասկանաք, որ մեր վիճակը գրեթէ անելանելի է, դուք կը սկսէք ընկալել, թէ ինչի մասին են խօսում քրիստոնեաները: Նրանք առաջարկում են բացատրել, թէ ինչպէս մենք յայտնուեցինք ներկայ իրավիճակում, որտեղ միաժամանակ ատում ենք ու սիրում բարութիւնը: Նրանք առաջարկում են բացատրել, թէ ինչպէս կարող է Աստուածը լինել անանձնական բանականութիւն, որը գտնւում է Բարոյականութեան օրէնքի ետեւում եւ,

միաժամանակ, լինել անհատ: Նրանք ձեզ ասում են, թէ ինչպէս են կատարուել մեզ համար անիրագործելի այս օրէնքի պահանջները պասի ժամանակ, թէ ինչպէս է Աստուածն ինքը դարձել մարդ, որպէսզի փրկի մարդկութեանը Աստծու դատաստանից: Սա հին պատմութիւն է, եւ եթէ ցանկանաք խորանալ դրանում, դուք, անկասկած, կը դիմէք այն մարդկանց, որոնք աւելի բանիմաց են այդ հարցում, քան ես: Այն ամէնը, ինչ ես խնդրում եմ ձեզնից, դա փաստերին դէմ առ դէմ նայելն է, որպէսզի հասկանաք այն հարցերը, որոնց քրիստոնէութիւնը առաջարկում է պատասխանել: Եւ դրանք շատ վախեցնող փաստեր են: Ես կը ցանկանայի աւելի հաճելի բան ասել, բայց պէտք է ասեմ այն, ինչ ճիշտ եմ համարում: Ի հարկէ, ես լիովին համաձայն եմ, որ քրիստոնէական կրօնը, ի վերջոյ, չարտայայտուող մխիթարանքի աղբիւր է: Բայց այն չի սկսւում մխիթարանքից: Այն սկսւում է վախից ու վհատութիւնից, որը ես նկարագրեցի: Եւ անիմաստ կը լինէր փորձել մօտենալ այդ մխիթարանքին առանց վհատութիւն ապրելու: Կրօնում, ինչպէս պատերազմում եւ այլ իրադրութիւններում, մխիթարանքը միակ բանն է, որ չէք կարող փնտրելով գտնել: Եթէ փնտրէք ճմարտութիւն, հնարաւոր է, որ վերջապէս գտնէք մխիթարանք: Իսկ եթէ փնտրէք միայն մխիթարանք, դուք չէք գտնի ոչ դա, ոչ էլ ճշմարտութիւն: Կը գտնէք միայն շողոքորթ խօսքեր եւ ձեզ համար ցանկալի մտքեր, որոնք սկզբում ձեզ կթուան իրականութիւն, իսկ վերջում կը զգաք յուսահատութիւն: Մեզնից շատերը ազատուել են նախապատերազմեան երազանքներից միջազգային քաղաքականութեան մասին: Ժամանակն է, որ նոյն կերպ վարուենք նաեւ կրօնի հարցում: